



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 մարտի 2025 թվականի թիվ 501-Ա

**ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՌԴ քաղ. էդիկ Ավագյանի լիազոր անձ Վարդուհի Ավագյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության վկայագրի էդիկ Ավագյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Խորհուրդների փողոց, 1-ին նրբանցք թիվ 2 հասցեում գտնվող 1800քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի էդիկ Հայկազի Ավագյանին /ծնված՝ 30.08.1952թ./ պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Խորհուրդների փողոց, 1-ին նրբանցք թիվ 2 հասցեում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված և փաստացի օգտագործվող 1624.9քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել էդիկ Ավագյանի սեփականության իրավունքը:
2. Սեփականության իրավունքով էդիկ Ավագյանին պատկանող 1624.9քմ մակերեսով հողատարածքում 1969թ. կառուցված 182.71քմ մակերեսով բնակելի տան՝ 1-ին հարկ /ներքին մակերեսը՝ 136.27քմ/, 182.71քմ մակերեսով բնակելի տան՝ 2-րդ հարկ /ներքին մակերեսը՝ 139.47քմ/, 4.86քմ մակերեսով պատշգամբի, 10.20քմ մակերեսով աստիճանահարթակի, 1970թ. կառուցված 62.41քմ մակերեսով խորդանոցի /ներքին մակերեսը՝ 51.94քմ/, 1932թ. կառուցված 79.33քմ մակերեսով հացատան /ներքին մակերեսը՝ 44.43քմ/, 20.03քմ մակերեսով ծածկի, 1980թ. կառուցված 104.84քմ մակերեսով ջերմոցի /ներքին մակերեսը՝ 98.72քմ/, 6.05քմ մակերեսով կաթսայատան /ներքին մակերեսը՝ 5.70քմ /, 1972թ. կառուցված 65.11քմ մակերեսով անասնաշենքի /ներքին մակերեսը՝ 55.60քմ/, 23.44քմ մակերեսով հարթակի նկատմամբ ճանաչել էդիկ Հայկազի Ավագյանի սեփականության իրավունքը՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Պ. Սևակի փողոց թիվ 4 բնակելի տուն հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մարտի 12
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 մարտի 2025 թվականի թիվ 502-Ա

**ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Վահագն Մելիքյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Վահագն Մելիքյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, գ. Լճաշեն, Պլտինի փողոց թիվ 5 / 1 հասցեում գտնվող հողատարածքում հանդիսությունների սրահի կառուցման համար:
2. Վահագն Մելիքյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մարտի 12
ք.Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 մարտի 2025 թվականի թիվ 503-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով, հիմք ընդունելով Սևան համայնքի ավագանու՝ 2025 թվականի մարտի 12-ի՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ավագանու՝ 2023 թվականի ապրիլի 20-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանում հավաքների իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» N 38-Լ որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Սևան համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» թիվ 28-Լ որոշմամբ հաստատված Կարգի 4-րդ կետը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում հանրային հավաքների և անցկացման իրազեկումների գրանցամատյանի պահպանման և վարման պարտականությունները վերապահել համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նելլի Ավետիսյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի մարտի 12
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 մարտի 2025 թվականի թիվ 504-Ա

**ՔԱՂԱՔԱՅԻ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՍ ՏԵՂԱԴՐՎԱԾ
ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ**

Քննելով քաղաքացի Դավիթ Հարությունյանի կողմից ինքնակամ տեղադրված ոչ հիմնական շինության վերաբերյալ նյութերը պարզեցի. 04.08.2024թ. ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության էկոլոգիային ծառայության աշխատակիցների կողմից կազմված արձանագրության համաձայն՝ քաղաքացի Դավիթ Հարությունյանի կողմից Սևանի թերակղզում, դեպի Սևանավանք տանող աստիճանների աջ մասում տեղադրվել է 15 քառ.մետր մակերեսով մետաղական ոչ հիմնական շինություն: Դիմումը Սևանի համայնքապետարանում ստացվել է 09.08.2024 թվականին: Այդ փաստով հարուցվել է վարչական վարույթ: Սևանի համայնքապետարանում 13.08.2024 թվականի քաղաքացի Դավիթ Հարությունյանը բացատրություն է տվել այն մասին, որ ինքը որևէ կերպ տեղեկություն չունի տեղադրված շինությունից: Անհրաժեշտություն է առաջացել ՀՀ ոստիկանության Սևանի ՆԳ բաժնի օժանդակությամբ պարզելու իրավախախտում կատարած անձի ինքնությունը: 16.08.2024թվականին ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի ՆԳ բաժնի պետը տեղեկացրել է, որ իրավախախտում կատարած անձը հանդիսանում է Ծովագյուղ գյուղի 1-ին փողոցի 104 տան բնակիչ Դավիթ Մեսրոպի Հարությունյանը: Սակայն դրանից հետո էլ քաղաքացին չի ընդունել իր կողմից իրավախախտում կատարելու փաստը: Իրավախախտում կատարած անձին հայտնաբերելու նպատակով շարունակվել են աշխատանքները նաև հետագա ժամանակաշրջանում: 30.12.2024 թվականին ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի Սևանի համայնքապետին ուղղված գրության հիման վրա, Սևանի համայնքապետարանում քաղաքացի Դավիթ Հարությունյանի նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ: Դրա շրջանակներում քաղաքացին նորից իր բացատրությամբ պնդել է, որ որևէ կերպ չի կատարել իրավախախտում: Սակայն գոյություն ունեցող փաստերի համադրմամբ, տեղում իրականացված տեղազնմամբ Դավիթ Հարությունյանի հետ իրականացված բացատրական աշխատանքով, հիմնավորվել է քաղաքացու կողմից իրավախախտում կատարելու փաստը: ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 247 հոդվածի 7-րդ մասի պահանջների համաձայն՝ նույն օրենսգրքի 37-րդ հոդվածի պահանջների համաձայն, վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման, եթե անցել է 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետը: Սակայն հաշվի առնելով, որ քաղաքացի Դավիթ Հարությունյանը խախտել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի ոչ հիմնական շինությունները տեղադրման կարգի մասին N 896 որոշման պահանջները, իրականացրել է ոչ հիմնական շինության տեղադրման ինքնակամ աշխատանքներ, ուստի ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝

որոշում եմ.

1. Պահանջել քաղաքացի Դավիթ Հարությունյանից /Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 1-ին փողոց, տուն 104 հասցե/ապամոնտաժելու տեղադրված մետաղական ոչ հիմնական շինությունը սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:
2. Պահանջել քաղաքացի Դավիթ Հարությունյանից տարածքը բերելու նախկին տեսքի:
3. Սույն որոշման 1-ին կետի պահանջները կամավոր չկատարելու դեպքում, հարցը լուծել օրենքով սահմանված դատական կարգով:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել 15 օրյա ժամկետում կամ վարչական դատարան՝ երկու ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մարտի 12
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 մարտի 2025 թվականի թիվ 505-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ՀՀ կառավարության՝ 19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ/ N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի, 7-րդ կետի ա) և բ) ենթակետերի, հիմք ընդունելով «Լազունա Մարկետ» ՍՊԸ - ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Լազունա Մարկետ» ՍՊԸ-ին / գործունեությունը՝ ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 176 հասցե / տրամադրել 2054թ. 1-ին եռամսյակի համար՝
 - 1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 10.100 դրամ;
 - 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 10.100 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի մարտի 12
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 մարտի 2025 թվականի թիվ 506-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ՀՀ կառավարության՝ 19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի, 7-րդ կետի ա) և բ) ենթակետերի, հիմք ընդունելով «Ռիփսիկ Մինասյան» ԱԶ -ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Ռիփսիկ Մինասյան» ԱԶ -ին / գործունեությունը՝ ք. Սևան, Գրիբայեդովի փողոց թիվ 9 / 38 հասցե / տրամադրել 2025թ. 1-ին եռամսյակի համար՝
 - 1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 10.100դրամ;
 - 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 10.100 դրամ :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի մարտի 12
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 մարտի 2025 թվականի թիվ 507-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ՀՀ կառավարության՝ 19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի, 7-րդ կետի ա) և բ) ենթակետերի, հիմք ընդունելով «Լալա Բարսեղյան» ԱԶ - ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Լալա Բարսեղյան» ԱԶ- ին / գործունեությունը՝ ք. Սևան, Սարգիս Սևանեցի փողոց թիվ 16 / 5 հասցե / տրամադրել 2025թ. 1-ին եռամսյակի համար՝
 - 1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 6.000դրամ;
 - 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 6.000 դրամ :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի մարտի 12
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 մարտի 2025 թվականի թիվ 508-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45 -րդ հոդվածի 1-ին մասի 8 -րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 12-րդ հոդվածի 7-րդ կետի, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N 146-Ն որոշման 1-ին կետով սահմանված 1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետի և հիմք ընդունելով «Ֆլեշ» ՍՊԸ -ի տնօրենի հայտը՝ **որոշում եմ.**

1. «Ֆլեշ» ՍՊԸ-ին / գործունեությունը՝ ք. Սևան, Երևանյան փողոց թիվ 1 / 3 հասցե / տրամադրել 2025թվականի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ Սևանի համայնքի բյուջեի 900165101503 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 90000 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մարտի 12
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 մարտի 2025 թվականի թիվ 509-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՐԻԱՆԱ ԱԼԲԵՐՏԻ ԻՍԱԶԱՆՅԱՆԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ**

Քննելով քաղաքացի Մարիանա Իսաջանյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը պարզեցի. «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և Սևանի ՆԳ բաժնի աշխատակիցների կողմից 03.05.2024 թ. կազմված արձանագրության համաձայն՝ ք. Երևան, Սարմենի փողոց թիվ 31 տան բնակիչ Մարիանա Իսաջանյանին վարձակալությամբ պատկանող հողատարածքում առկա են շինություններ, որոնց կարգավիճակը հայտնի չէ: Տեղեկատվությունը համայնքապետարան է ներկայացվել 13.01.2025 թվականին: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում քաղաքացի Մարիանա Իսաջանյանը հրավիրվել է Սևանի համայնքապետարան պարզաբանումներ տալու նպատակով: Քաղաքացին ներկայացրել է ՀՀ վարչական դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռը, ըստ որի՝ ճանաչվել է Մարիանա Ալբերտի Իսաջանյանի 2001 թվականի հուլիսի 12-ի վարձակալության իրավունքի պետական գրանցման իրավահարաբերության առկայությունը: 2022 թվականի հունվարի 13-ին «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և քաղաքացու մինչև կնքվել է հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման մասին պայմանագիր: Պայմանագրին կից ներկայացված հողամասի հատակագծով պարզվում է, որ տարածքում առկա է հանգստի տնակ, ավտոտնակ, շվաքարան և պոմպակայան, դա հաստատվում է նաև տեղազննմամբ կատարված լուսանկարներից: Նշված շինությունները կառուցվել են 2000 թվականին: Քաղաքացին նաև ներկայացրել է հանգստի գոտու բարեկարգման նախագիծը հաստատված «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից: Շինությունների օրինականությունը ճանաչելու համար, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի պահանջներին համապատասխան, քաղաքացու կողմից չներկայացվեց ճարտարապետահատակագծային առաջադրանքը ինչպես նաև համայնքի ղեկավարի կամ մարզպետի կողմից տրված շինարարության թույլտվությունը: Փաստորեն, կառուցված շինությունները համարվում են ինքնակամ շինություններ: ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ շարունակվող և տևող իրավախախտման բացահայտման օրվանից վարչական վարույթը պետք է իրականացվի երկու ամսվա ընթացքում: ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն՝ իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտում կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա: Վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող և վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն, իսկ պատասխանատվությունը սահմանող կամ այն ուժեղացնող ակտերը հետադարձ ուժ չունեն: ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 32-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ իրավական ակտով սահմանված շրջանակներում (...) սույն

օրենսգրքի և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: 2021 թվականի դեկտեմբերի 16 -ի ՀՕ-401-Ն օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում «ՎԻՎ» օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված սանկցիաները խստացվել են, իսկ դա նշանակում է, որ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության ընդհանուր կանոնի համաձայն այդ ակտը հետադարձ ուժ չունի և դրանով նախատեսված սանկցիաները կարող են կիրառվել բացառապես 2022 թվականի հունվարի 6-ից հետո կատարված արարքների համար: Իսկ 2022 թվականի հունվարի 6-ից հետո ուժի մեջ մտած «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի փոփոխությունների համաձայն, համայնքապետարանի կողմից ինքնակամ շինությունների ապամոնտաժման հարցը կքննարկվի սույն վարույթից առանձին՝ օրենքով սահմանված կարգով: Ուստի ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «ՎԻՎ» օրենսգրքի մինչև 2021թ. դեկտեմբերի 16-ը գործող 154-րդ հոդվածի 1-ին կետի և նույն օրենսգրքի 37-րդ հոդվածի պահանջներով, **որոշում եմ.**

1. Քաղաքացի Մարիանա Իսաջանյանի /ք. Երևան, Սարմենի փողոց թիվ 31 տուն հասցե/ նկատմամբ նշանակել վարչական տուգանք 200000 դրամի չափով:
2. Պահանջել Մարիանա Իսաջանյանից տարածքի կառուցապատումը կատարել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
3. Սույն որոշման 1-ին կետի պահանջները չկատարելու դեպքում հարցը լուծել դատական կարգով
- : 4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադաս մարմնին 15 օրյա ժամկետում կամ վարչական դատարան՝ երկու ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի մարտի 12
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 մարտի 2025 թվականի թիվ 510-Ա

**ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ
ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ԸՆԴԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. «ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 844-Ն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղ. Մերուժան Ստեփանյանի դիմումը՝ վարձակալության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք գ. Վարսեր հասցեում գտնվող 1.7հա մակերեսով հողամասն ընդլայնելու մասին, **որոշում եմ.**

1. Մերուժան Սերյոժաի Ստեփանյանին վարձակալության իրավունքով պատկանող, Սևան համայնք, գ. Վարսեր հասցեում գտնվող 1.7հա մակերեսով հողամասն ընդլայնել 1.07221հա չափով /վկայական՝ 08032025-05-0005/, վարձակալության իրավունքով, մինչև 24.12.2045թ. ժամկետով, 1քմ՝ 10 դրամ վճարով:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի մարտի 12
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2025 թվականի թիվ 511-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 11.06.2024Թ.
N 1320-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 11.06.2024թ. «Բնակարանը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1320-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝
 - 1) «Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 2-րդ կետի» բառերը:
 2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մարտի 13
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2025 թվականի թիվ 512-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Երվանդ Խաչատրյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, ք. Սևան, քաղ. զբոսայգուց արևմուտք հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 2391300, տրված 09.10.2008թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, քաղ. զբոսայգուց արևմուտք հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Արցախի փողոց թիվ 5 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի մարտի 13
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2025 թվականի թիվ 513-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Վոլոդյա Սաղաթեյանին դիմումը՝ կառուցապատման իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց 137 / 20 հողամաս, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց 137 / 23 հողամաս հասցեներում գտնվող անշարժ գույքերը /վկայականներ՝ 23092022-05-0001, 05032025-05-0074 / միավորելու և միավորված անշարժ գույքերի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց 137 / 20 հողամաս և Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց 137 / 23 հողամաս հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորել՝ տրամադրելով Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 137 / 20 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մարտի 13
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2025 թվականի թիվ 514-Ա

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «Արտմա» ՍՊԸ-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. «Արտմա» ՍՊԸ-ին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, գ. Լճաշեն, Ավազի հանքի փողոց թիվ 8 հասցեում արևային կայանի կառուցման համար:
2. «Արտմա» ՍՊԸ-ն շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. «Արտմա» ՍՊԸ-ն պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մարտի 13
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2025 թվականի թիվ 515-Ա

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Ռուբեն Մանուկյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ռուբեն Մանուկյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց 21 շենք 1 հասցեում գտնվող բնակարանին կից կցակառուցյի կառուցման համար:
2. Ռուբեն Մանուկյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Ռուբեն Մանուկյանը պարտավոր են շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մարտի 13
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2025 թվականի թիվ 516-Ա

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «Նավիգ Գրուպ» ՍՊԸ-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. «Նավիգ Գրուպ» ՍՊԸ-ին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, գ. Զովաբեր թիվ 8 հասցեում արևային կայանի կառուցման համար:
2. «Նավիգ Գրուպ» ՍՊԸ-ն շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. «Նավիգ Գրուպ» ՍՊԸ-ն պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մարտի 13
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2025 թվականի թիվ 517-Ա

**ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Սարգիս Մալխասյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Սարգիս Մալխասյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Ղ. Ալիշանի փողոց թիվ 17 հասցեում գտնվող հողատարածքում տնտեսական շինության և պարսպի կառուցման համար:
2. Սարգիս Մալխասյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի մարտի 13
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2025 թվականի թիվ 518-Ա

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «Իշտիկունի արևային» ՍՊԸ-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. «Իշտիկունի արևային» ՍՊԸ-ին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, գ. Լճաշեն, Ավազի հանքի փողոց թիվ 5 հասցեում արևային կայանի կառուցման համար:
2. «Իշտիկունի արևային» ՍՊԸ-ն շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. «Իշտիկունի արևային» ՍՊԸ-ն պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մարտի 13
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2025 թվականի թիվ 519-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 08.01.2025Թ.
N 21-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 08.01.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 21-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումը՝
 - 1) «ճանաչել համայնքային սեփականություն» բառերից հետո կարդալ «համապատասխանեցնել Լճաշեն բնակավայրի պարզեցված գլխավոր հատակագծին՝ փոխելով գյուղատնտեսական՝ նպատակային նշանակություն, վարելահող՝ գործառնական նշանակություն ունեցող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի՝ գործառնական նշանակության հողատարածքի» բառերի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մարտի 13
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2025 թվականի թիվ 520-Ա

**ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Չկալովկա հասցեում գտնվող 0.78986հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 07042023-05-0032/, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի՝
 - 1) առաջին միավոր գույքի՝ 0.1000հա մակերեսով գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, արոտավայր՝ գործառնական նշանակության;
 - 2) երկրորդ միավոր գույքի՝ 0.68986հա մակերեսով գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, արոտավայր՝ գործառնական նշանակության:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 3-րդ կետի:
- 3 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մարտի 13
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2025 թվականի թիվ 521-Ա

**ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻ, ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԻ, ԳԾԱՅԻՆ ԶԱՓԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.04.2021թ. N 698-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ սեփականություն իրավունքով «ՆԼ Պոռպեռտիս» ՓԲԸ-ին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Գործարանային փողոց թիվ 5 / 10 հասցեում գտնվող անշարժ գույքի / ծածկագիր 05-004-0007-0013/ գծային չափերը և երկրաչափական պատկերը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Գործարանային փողոց թիվ 5 / 10 հասցեում գտնվող անշարժ գույքի գծային չափերը և երկրաչափական պատկերը:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մարտի 13
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2025 թվականի թիվ 522-Ա

**ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 10.06.20082. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդված 2-րդ կետով և 3-րդ կետերով, ՀՀ Կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Համլետ Հայրումյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, ք. Սևան, Պոռոշյան փողոց թիվ 7 հասցեում գտնվող 1430.0քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Համլետ Խաչատուրի Հայրումյանին /ծնված՝ 07.08.1955թ./ պատկանող, ք. Սևան, Պոռոշյան փողոց թիվ 7 հասցեում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 1430.0քմ հողատարածքին կից՝ 286.0քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Համլետ Հայրումյանի սեփականության իրավունքը:
2. Սեփականության իրավունքով Համլետ Հայրումյանին պատկանող 1716.0քմ մակերեսով հողատարածքում 1980թ. կառուցված 268.62քմ մակերեսով բնակելի տան՝ 1-ին հարկ /ներքին մակերեսը՝ 217.07քմ/, 209.53քմ մակերեսով բնակելի տան՝ 2-րդ հարկ /ներքին մակերեսը՝ 167.92քմ/, 64.92քմ մակերեսով կիսանկուղի /ներքին մակերեսը՝ 13.35քմ/, 23.57քմ մակերեսով տնտեսական շինության /ներքին մակերեսը՝ 46.73քմ/, 93.07քմ մակերեսով տնտեսական շինության /ներքին մակերեսը՝ 75.49քմ/, 18.27քմ մակերեսով օժանդակ շինության / ներքին մակերեսը՝ 16.11քմ /, 49.68քմ մակերեսով խորդանոցի /ներքին մակերեսը՝ 46.22քմ/, 57.39քմ մակերեսով բաց պատշգամբի, 22.58քմ մակերեսով աստիճանահարթակի և 6.36քմ մակերեսով պարսպի նկատմամբ ճանաչել Համլետ Հայրումյանի սեփականության իրավունքը՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Բարեկամության փողոց թիվ 7 բնակելի տուն հասցե:
3. Սևան համայնք, ք. Սևան, Բարեկամության փողոց թիվ 7 հասցեում գտնվող 1716.0քմ մակերեսով հողատարածքում 2002թ. կառուցված 16.88քմ մակերեսով ծածկը ճանաչել ինքնակամ շինություն:

4. Սևան համայնք, ք. Սևան, Բարեկամության փողոց թիվ 7 հասցեում գտնվող 1716.0քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 151.0քմ մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքի 30% վճարելու պայմանով /1քմ՝ 866.25 / դրամ օտարել Համլետ Հայրումյանին՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Բարեկամության փողոց թիվ 7 / 1 հողամաս հասցե:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մարտի 13
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2025 թվականի թիվ 523-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Լենա Խաչատրյանի դիմումը՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Վարսեր հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 28022025-05-0087/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Վարսեր հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Վարսեր, 2-րդ փողոց թիվ 7 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մարտի 13
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2025 թվականի թիվ 524-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՄԻՇԱ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ**

Քննելով քաղաքացի Միշա Ստեփանյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը պարզեցի. «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և Սևանի ՆԳ բաժնի աշխատակիցների կողմից 30.04.2024 թ. կազմված արձանագրության համաձայն՝ ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց 18 / 12 բնակիչ Միշա Ստեփանյանին վարձակալությամբ պատկանող հողատարածքում առկա են շինություններ: Տեղեկատվությունը համայնքապետարան է ներկայացվել 13.01.2025 թվականին: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում քաղաքացի Միշա Ստեփանյանը հրավիրվել է Սևանի համայնքապետարան պարզաբանումներ տալու նպատակով: Քաղաքացին հայտնել է, որ հողատարածքում շարժական տնակները և տաղավարների տեղադրումը իրականացվել է 2004-2007 թթ. հանգստի գոտի կազմակերպելու նպատակով: Տարածքում տեղադրվել են 2.8 x 8մ չափերի՝ 1 հատ, 3.5 x 7մ չափերի՝ 1 հատ, 3 x 9մ չափերի՝ 4 հատ, 3 x 7մ չափերի՝ 1 հատ, 3 x 6մ չափերի՝ 1 հատ տնակներ (ոչ հիմնական շինություններ), ինչպես նաև 10 հատ տաղավարներ: Շինությունների մի մասը տեղադրվել է քարից հավասարեցնող շարվածքի վրա, որը իր հերթին ամրացված է հողի հետ: Շինությունների տեղադրումը իրականացվել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896 որոշման պահանջների խախտումով: Ներկայացված փաստաթղթերում բացակայում են ճարտարապետահատակագծային առաջադրանքը, նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և շինարարության թույլտվությունը: Փաստորեն ոչ հիմնական շինությունների տեղադրումը կատարվել է ինքնակամ, հիմնական շինության կառուցապատման տարրերով: ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն՝ իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտում կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա: Վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող և վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն, իսկ պատասխանատվությունը սահմանող կամ այն ուժեղացնող ակտերը հետադարձ ուժ չունեն: ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 32-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ իրավական ակտով սահմանված շրջանակներում (...) սույն օրենսգրքի և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: 2021 թվականի դեկտեմբերի 16 -ի ՀՕ-401-Ն օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում «ՎԻՎ» օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված սանկցիաները խստացվել են, իսկ դա նշանակում է, որ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության ընդհանուր կանոնի համաձայն՝ այդ ակտը հետադարձ ուժ չունի և դրանով նախատեսված սանկցիաները կարող են կիրառվել բացառապես 2022 թվականի

հունվարի 6-ից հետո կատարված արարքների համար: Միաժամանակ, հիմնավորված է համարվում, որ քաղաքացի Միշա Ստեփանյանը խախտել է 2001թ. սեպտեմբերի 24-ի N 896 որոշման պահանջները ոչ հիմնական շինությունների տեղադրման մասով և իրականացրել է ինքնակամ շինություններ: 2022 թվականի հունվարի 6-ից հետո ուժի մեջ մտած «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի փոփոխությունների համաձայն՝ համայնքի կողմից ինքնակամ շինությունների ապամոնտաժումը կքննարկվի սույն վարույթից առանձին ընթացակարգով՝ օրենքով սահմանված կարգով: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «ՎԻՎ» օրենսգրքի մինչև 2021թ դեկտեմբերի 16-ը գործող 154-րդ հոդվածի 1-ին կետի և նույն օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Քաղաքացի Միշա Ստեփանյանի /ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 18 / 12 բնակարան հասցե/ նկատմամբ նշանակել վարչական տուգանք 200000 դրամի չափով:
2. Պահանջել Միշա Ստեփանյանից տարածքի կառուցապատումը կատարել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
3. Սույն որոշման 1-ին կետի պահանջները չկատարելու դեպքում հարցը լուծել դատական կարգով:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել 15 օրյա ժամկետում կամ վարչական դատարան՝ երկու ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի մարտի 13
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2025 թվականի թիվ 525-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱՎԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ**

